

ՀՐԱՆԴ ԳԱՆԳՐՈՒՆԻ, «ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՕՍՄԱՆՆԱՆ ԲԸՌ-ՆԱՏԻՐՈՒԹԵԱՆ ԴԵՄ, 1890-1910», ՊԵՂՐԱԼՔ, 1973, 414 էջ:

Հրանդ Գանդրունիի առաջին գործն է ասիկա, որ նուիրուած է արեւմտահայ պատմութեան վերջին մէկդարեայ շրջանի ամենէն խառնակ եւ նաեւ ամենէն քիչ ուսումնասիրուած մէկ քսանամեակին: Արեւմտահայութիւնն իր ապրած առօրեային մէջ հազիւ թէ ժամանակ ունեցաւ իր ցաւերը լալու եւ կուսակցական պատմագրութիւն մը յառաջացնելու, իսկ հայրենի մտաւորականութիւնն ալ պարզօրէն մղկտեցաւ իր անզօրութենէն. բարձր քաղաքականութիւն էր եւ կարելի էր շատ բան ըսել. բարեբախտաբար Հայկական Տասնհինգի յիսնամեակը եկաւ ցոյց տալու թէ հայրենի պատմագրութիւնը չէր ուրացած արեւմտահայութիւնն ու անոր ապրած երէկը:

Սակայն շատ քիչեր ուզեցին գնահատանքի իսկական նժարումի մը ենթարկել հայ յեղափոխութիւնը, որ, եթէ յաջողած ըլլար, պիտի անկասկած բարձրացուէր եօթներորդ դարաթիւ երկինքներուն, բայց որովհետեւ անիկա ձախողեցաւ՝ քիչ մը ամէն մարդ ուզեց ուրանալ, նուազագոյն պարագային՝ անտեսել դայն: Եւ, ահա՛ւասիկ, արդիւնքն եղաւ խոպան ձգուած շրջան մը մեր պատմութեան մէջ, որուն մասին կատարուած «ուսումնասիրութիւնները» շեղան յուշագրութիւններէ, առասպելներէ, հեքեաթներէ տարբեր բան: Արդարեւ, այդ շրջանով զբաղող ո՛չ մէկ մարդ ուզեց երթալ ուղղակի աղբիւրներուն. իրաւ էր, որ այդ շրջանն ընդգրկող օտմանեան ո՛չ մէկ արխիւային նիւթ կար օգտագործելի. կար, սակայն, օտար դիւանագիտականը, ինչպէս որ կար նաեւ կուսակցական արխիւներուն լոյսին բերելիքը: Բայց ամէն մարդ գոհացաւ ուրիշին ըսածով, ուրիշին գրածով, եւ՝ ահաւասիկ արդիւնքը:

Այսօր, շատ վիճելի շրջան մըն է 1890-1910 թուականներով ընդգրկուող շրջանը. կան կողմի պատմութիւններ, կան դաշնակցական, հնչակեան, եւ ինչո՞ւ է, նաեւ ռամկավար-արմենական պատմութիւններ, որոնք, սակայն, փոխանակ զիրար ամբողջացնելու՝ յաճախ կը պախարակեն, կը քննադատեն եւ կ'անտեսեն զիրար: Ու շրջանը կը մնայ մութ, կը մնայ խառնակ:

Հրանդ Գանդրունիի գիրքը յաւելում մըն է ստեղծուած այս պատմագրութեան, եւ, սակայն, եթէ չի յտակացներ կարգ մը վիճելի հարցեր, չի տար նոր վարկածներ պատումի եւ ճշդումի, չի խօսիր արխիւային նիւթերու վրայ յենած՝ աւնուազն, սակայն, կը կատարէ ընդարձակ մէջբերումներ զանազան հեղինակութիւններէ՝ այդ ձեւով արժեւորելու, դրական քաջի զարնելու կատարուածը:

Կատարուած մէջըբերումներուն առատութիւնը դիտու պտոյտ առթիւրու ամէն տուեալ ունի՝ պաշտպանելու համար հայ յեղափոխութեան արդարացի եւ իրաւացի ըլլալը: Գանդրունի պէտք ունէ՞ր մէջըբերումներու առատութեամբ խեղդելու ընթերցողը, կ'անգիտանանք. բայց մէկ բան յստակ է, որ Գանդրունի ուղած է հիմնաւորել այն վարկածը թէ հայութիւնը ձեռնարկեց յեղափոխական որոշ շարժումի մը, որովհետեւ ալ չէր կրնար չձեռնարկել, եւ թէ այդ շարժումը ձախողեցաւ, իրմէ՝ հայութեանն զուրա դռնուող պատճառներով, պատճառներ, զորոնք ինք չէր կրնար ղեկավարել, չէր կրնար սանձել:

Հատորին ընթերցումէն ետք մարդ կը տարուի մտածելու թէ ինքսունական թուականներուն յաջորդող քսանամեակի տիրական միակ ուժը Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնն էր, թէ ինչ որ կատարուեցաւ՝ սկսաւ անով, թէ մնացեալները, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, Արմենականները եւ մասամբ նորին, հաղիւ թէ կը կենային յեղափոխութեան լուսանցքին վրայ, թէ հետագային, Օսմանեան Կայսրութեան սահմանադրական շրջանին, անոնք ինկան կորանքէ կորանք եւ իրենց հետ անկումի առաջնորդեցին նաեւ ամբողջ արեւմտահայութիւնը: Գուցէ որոշ ճշմարտութիւններ կան այս բոլորին մէջ, բայց Գանդրունիի գիրքը չի գար յստակացնելու այդ ճշմարտութիւնները. աւելին, չի յստակացներ նաեւ հնչակեան-իթիլաֆական փոխարարներութիւնը, որմէ շատ բան կախում պիտի ունենար այսօր՝ դատապարտել կարենալու համար հանդիպակաց կողմը:

Հայ Յեղափոխութիւնը Օսմանեան Կայսրութեան Բռնատիրութեան Դեմ, 1890-1910 հատորը կը բաղկանայ երկու հիմնական բաժիններէ, որոնց առաջինով կ'ընդգրկուի 1890-1907 թուականը ինկող շրջանը. իսկ երկրորդով՝ 1907 թուականէն ետք եկող ժամանակաշրջանը, որ իր աւարտը կը գտնէ Հայկական Տասնհինգուով: 216 էջի մէջ պարփակուող այս առաջին մասին ութը գլուխները անվարան կարելի էր խտացնել՝ առաջնոք որ վնասուէր բովանդակութիւնը: Հոս, այս հատուածին մէջ, Գանդրունի կու տայ «Միջազգային Կացութիւնը և Վեց Մեծերու Դիրքորոշումները 1890-ական թուականներուն», «Հայ Յեղափոխութեան Ազատագրական Պայքարը», «Հայ Ազատագրական Պայքարի Ընթացքը Օսմանեան Բռնատիրութեան Օրով», «Հայ Բաղադրական Հոսանքները», «Հայ Յեղափոխական Շարժումները», «Հայ եւ Օտար Վկայութիւններ Օսմանեան Բռնակալութեան եւ Հայ Ազատագրական Պայքարի Մասին», «Կուսակցական Ներքին Տարակարծութիւններ», եւ «Օսմանեան Բռնատիրութեան դէմ Հայ Ազատագրական Պայքարի Գնահատման

Հարցի Շուրջ». բաւակա՛ն լայն ծանօթութիւն, բաւակա՛ն լայն վկայութիւն, բաւակա՛ն լայն մէջբերում, բայց թի՛չ վերլուծում, թի՛չ նմարում :

Հատորին երկրորդ բաժինը, որ վերնադրուած է «Հայ Յողափոխութիւնը Իթթիհատի Բռնատիրութեան Ծրջանին» բացատրութեամբ՝ ունի եօթը գլուխ, որոնցմէ, կրկին, կարելի էր քանի մը հասար զեղջել եւ իրարու միացնել առա՛նց որեւէ վնասի: Այսպէս՝ այս հատուածով Գանդրունի կու տայ «Միջազգային Քաղաքական Կացութիւնը (1907-1914)», «Իթթիհատի Քաղաքական Դիմագիծը», «Իթթիհատի Դիմագիծը Սահմանադրութեան Ծրջանին», «Իթթիհատի հաւաքը եւ Բանթուրքիմը», «1909-ի Կիլիկիոյ Հայոց Աղէտին Շուրջ», «Իթթիհատը եւ Հայ Քաղաքական Միտքը», «Իթթիհատի Դէմ Պայքարը Սուրիոյ եւ Լիբանանի Մէջ», «Թուրք Պատմաբաններուն Պօսքը Իթթիհատի Մասին» եւ «Մ. Դ. Հնչակեան Կուսակցութիւնը Իթթիհատի Դէմ» գլուխները: Իրաւ է որ անոնց բոլորն ալ անմիջականօրէն չեն ազերսուիր Հայ Յեղափոխութեան հետ, եւ անվարան կարելի է դանոնք հանել այս գործէն՝ առա՛նց որ խորապէս տուժէ Գանդրունիի Հայ Յեղափոխութիւնը հատորը. արդարեւ, այս հատուածին հինգերորդ գլուխը, որ կ'իյնայ «Իթթիհատի Դէմ Պայքարը Սուրիոյ եւ Լիբանանի Մէջ» խորագրին ներքեւ, ո՛չ մէկ կապ ունի հայութեան հետ. անոր յաջորդող գլուխը, որ վերնադրուած է «Թուրք Պատմաբաններու Պօսքը Իթթիհատի Մասին»՝ դատապարտութիւնն է Երիտասարդ Կուսակցութեան՝ նոյն ինքն թուրքին կողմէ, բայց ա՛յս ալ շահ մը չ'ապահովեր Հայ Յեղափոխութեան գնահատումին համար:

Աւելին, Գանդրունիի գիրքին ընթերցումէն ետք երեւան կու դան հիմնական երկու հարցեր, որոնցմով զբաղած պէտք էր որ ըլլար հեղինակը.

Առաջին, ինչո՞ւ եւ ի՞նչպէս յառաջացաւ Հայ Յեղափոխութիւնը:

Երկրորդ, ի՞նչ ըրաւ անիկա:

Գանդրունի կը փորձէ զբաղիլ այս երկու հարցերով ալ, բայց, դժբախտաբար, անոնց սահմանումի եւ սահմանազժումի դործողութիւնն է որ յստակ չէ. ասկէ՛ հատորին պակսող կազմակերպուածութիւնը, ասկէ՛ նաեւ օգտագործուող նիւթերուն առատութիւնը եւ մերթ կրկնութիւնը, մանաւանդ՝ վարկածներու շատութիւնը: Գանդրունի բաւական շատ ըսելիք ունի, բաւական ալ շատ վարկածներու մասին. իսկ ասիկա զինք կը տանի տարածումի, որ, դժբախտաբար, զինք չ'առաջնորդեր յստակացումի, մեկին եզրա-

կացութիւններու: Ասկէ՛ նաեւ ժամանակագրական ետ ու առաջ շարժումը, որ եթէ հեղինակին կու տայ որոշ ազատութիւն եւ ճկունութիւն իր նիւթին հետ վարուելու այնպէս ինչպէս ինք կը կամի՝ կու տայ նաեւ պատմութեան ոչ-շարունակականութիւն մը, որ ընթերցողին մօտ կը ստեղծէ ընթերցումին թելը կորսնցնելու հակամիտութիւն:

Ըսինք՝ Հրանդ Գանգրունիի պատմագիտական առաջին գործն է այս. յստակ է որ Գանգրունիի պատմագիտութիւն կը փորձէ եւ կը տառապի անով, յստակ է նաեւ, որ որպէս առաջին փորձ՝ տանելի միջինի մը վրայ կը կենայ այս գործը, բայց պատմագրական գործի մը մէջ անհրաժեշտ է առկայութիւնը կարգ մը տուեալներու. այսպէս՝ նշումը օգտագործուած բոլոր աղբիւրներուն, լրիւ եւ ամբողջական կերպով: Ընթերցողը պէտք չէ օգէն առկախ մնայ՝ մէջբերումի մը պարագային, որքան որ ալ այդ մէջբերումն ըլլայ հանրածանօթ. ապա՝ մատենագիտութեան մէջ նշումը օգտագործուած բոլոր՝ աղբիւրներուն. յետոյ՝ գործերու եւ էջերու նշումին գրութենէն դուրս դուրսելը. կարելի է զանոնք զետեղել կամ էջատակին, եւ կամ ալ՝ իւրաքանչիւր գլուխէ ետք. նոյնիսկ կարելի է անոնց բոլորը զետեղել հատորի վերջաւորութեան՝ որպէս անկախ հատուած մը ծանօթագրութիւններու:

Գանգրունիի գիրքն ունի մատենագիտութեան ցանկ մը, ուրկէ, սակայն, կը պակսի բաւական մեծ թիւ մը օգտագործուած աղբիւրներու. մատենագիտական այս ցանկը անհրաժեշտ կերպով պէտք էր որ ըլլար ամբողջացուած: Իսկ նոյնքան անհրաժեշտ էր հատորի վերջաւորութեան աւելցնել ցանկ մը տեղանուններու եւ անձնանուններու՝ ի շահ հատորի օգտագործումին:

Բայց այսօր կարելի է անվարան կերպով ըսել, թէ Գանգրունիի հատորը, հակառակ իր ակնբախ թերիններուն՝ շահ մըն է եւ յաւելում մը իր ընդգրկած շրջանի պատմութեան յստակացումին եւ ընկալումին, ի՞նչ փոյթ որ հատորը կը ջանայ պարզերես հանել Ս. Դ. Հնչակեան Կուսակցութիւնը, եւ հպարտութեան առիթ մը ստեղծել անոր համակիրներուն:

ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՆ